



Ներքին վերահսկող

Վարդան Հովհաննիսյան, Տնտեսագիտության մագիստրոս

Վարդան Հովհաննիսյանը Կազմակերպության ներքին վերահսկողի հաստիքը ստանձնել է 2008թ-ի նոյեմբեր ամսից, նպատակ ունենալով նոր որակ հաղորդել ներքին վերահսկողի համապատասխան գործառնություններին՝ կարևորելով վերջինիս դերը Կազմակերպությունում և ընդհանուր ներքին հսկողության համակարգում:

Նախքան «ՍԵՖ Ինտերնեյշնլ ՈւՎԿ»-ին, Վորլդ Վիժնի միկրոֆինանսական կազմակերպությանը միանալը, Վարդան Հովհաննիսյանը աշխատել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում՝ տարբեր ժամանակներում զբաղեցնելով Բանկի ներքին աուդիտի անդամի, ներքին աուդիտի, ներքին վերահսկողության վարչությունների աշխատակցի հաստիքները: Իր աշխատանքային գործունեության ընթացքում Վ.Հովհաննիսյանը բազմիցս հանդես է եկել որպես ստուգող խմբի ղեկավար, ժամանակին բացահայտելով էական և տարաբնույթ ռիսկեր պարունակող բանկային գործարքները:

1999-2003թթ. Վ.Հովհաննիսյանը աշխատել է «Ինֆոսերվիս» ՍՊԸ-ում որպես տնտեսագետ:

2002-2008թթ. որպես անհատ ձեռներեց, իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն համագործակցելով «Հայփոստ» ՊԲԸ-ի հետ:

Վ.Հովհաննիսյանը մասնակցել է ՀՀ Կենտրոնական Բանկի, ՖԲԲ-ի կողմից կազմակերպված մասնագիտացված դասընթացներին, Վորլդ Վիժնի կողմից ֆինանսական հաստատությունների համար Ստամբուլում կազմակերպված “Խարդախության բացահայտում” թեմայով դասընթացին և ուսուցմանը: